

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը ստանդարտացված գործառնությունների իրականացում է, որի նպատակն է ապահովել ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ արժանահավատության բարձր մակարդակ: Ստորեւ դիտարկվող աուդիտի միջազգային ստանդարտները սահմանում են այդ գործընթացում աուդիտորի պատասխանատվության շրջանակները եւ աուդիտի հիմնական սկզբունքները:

Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 200՝ Անկախ աուդիտորի նպատակը, աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան աուդիտի իրականացման վերաբերյալ ստանդարտը՝ նախ ներկայացնում է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակը: Մասնավորապես նշվում է, որ աուդիտի նպատակը ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ օգտագործողների վստահության մակարդակի բարձրացումն է: Այն ապահովելու համար կազմվում է աուդիտորի եզրակացություն առ այն, որ բոլոր էական առումներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվողության պահանջներին համապատասխան: Համապատասխանությունը ներառում է ինչպես աուդիտի ստանդարտների կիրառման, այնպես էլ օրենսդրական պահանջների ապահովման, ֆինանսական տվյալների արդար են օբյեկտիվ ներկայացման պարտադիր պայման: Աուդիտորը պետք է բավարարի աուդիտորի վարքագծի պահանջները եւ աուդիտը պլանավորի ու իրականացնի՝ կիրառելով մասնագիտական կասկածամտություն այն հանգամանքների նկատմամբ, որոնք կարող են ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման պատճառ դառնալ: Միաժամանակ՝ աուդիտի իրականացումը ենթադրում է մասնագիտական դատողությունների կիրառում: Աուդիտի իրականացումը անհնար է ապահովել առանց աուդիտորի վարքագծի պահանջները պահպանելու: Աուդիտորի վարքագծի վերաբերյալ պահանջները սահմանում են մի շարք սկզբունքներ, որոնց պահպանումը պարտադիր է աուդիտի իրականացնելիս: Այդ սկզբունքներն են անկախությունը, օբյեկտիվությունը, մասնագիտական ունակությունը եւ վերաբերմունքը, գաղտնիությունը եւ մասնագիտական վարքագիծը: Ստանդարտը ներկայացնում է նաեւ համապատասխան բացատրական նյութեր եւ կիրառման օրինակներ:

Նշենք նաեւ, որ աուդիտ իրականացնելիս աուդիտորը կարող է օգտագործել, աուդիտի միջազգային ստանդարտների հետ մեկտեղ, տվյալ երկրի օրենսդրության պահանջներով սահմանված այլ ստանդարտներ: Այդ պարագայում կարող է անհրաժեշտություն առաջանալ կիրառել լրացուցիչ ընթացակարգեր, բացի աուդիտի միջազգային ստանդարտներով սահմանված ընթացակարգերից:

Ստանդարտը պարզաբանում է նաեւ մասնագիտական կասկածամտության եւ դատողությունների կիրառման անհրաժեշտությունը, դրանց ձեւերը, աուդիտորական ապացույցների եւ աուդիտի ռիսկի էությունը, հանրային հատվածում աուդիտի ստանդարտի կիրառելիության առանձնահատկությունները: Մասնավորապես նշվում է, որ մասնագիտական կասկածամտության առաջացման դեպքերի համար որպես հիմք կարող են հանդես գալ.

- աուդիտորական այն ապացույցները, որոնք հակասում են ձեռք բերված այլ աուդիտորական ապացույցներին,
- տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում փաստաթղթերի արժանահավատությունը,
- խարդախության հնարավոր հանգամանքների առկայությունը եւ այլն:

Մասնագիտական դատողությունը ժամանակակից աուդիտի իրականացման կարեւորագույն գործոնն է: Այն հիմնականում վերաբերում է էականության եւ աուդիտի ռիսկի, աուդիտորական ապացույցների ձեռքբերման եւ ընդհանրապես աուդիտի իրականացման ժամկետների որոշմանը, ինչպես նաեւ ղեկավարության իրականացրած գործողությունների գնահատմանը:

Հաջորդ՝ ԱՄՍ 210 աուդիտի իրականացման պայմանների վերաբերող ստանդարտը սահմանում է աուդիտի իրականացման նախապայմանները, պարբերաբար իրականացվող աուդիտի պահանջները: Աուդիտի իրականացման նախապայմանները ներառում են ղեկավարության հետ պարտավորությունների եւ պայմանների քննարկում եւ համաձայնության ձեռքբերում: Ղեկավարության պարտավորությունները վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների պատշաճ պատրաստմանը, ինչպես նաեւ համապատասխան ներքին վերահսկողության գործունե մեխանիզմների ապահովմանը: Համաձայնություն ձեռք բերելու պարագայում կազմակերպության ղեկավարությունը պարտավոր է աուդիտորին տրամադրել ֆինանսական հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ներառյալ՝ հաշվետվությունները կազմելու համար օգտագործված փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում այլ լրացուցիչ տեղեկատվություն եւ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար աուդիտորի մատնանշած անձանց հետ շփվելու անսահմանափակ հնարավորություն: Աուդիտի իրականացման հիմնական դրույթները ներառվում են աուդիտի իրականացման նամակ-պարտավորագրում: Դրանք են՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակը եւ շրջանակը, աուդիտորի պատասխանատվությունը, ղեկավարության պատասխանատվությունը, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ ֆինանսական հաշվետվողության քաղաքականության առկայությունը:

Շարունակական աուդիտի դեպքում աուդիտորը պետք է դիտարկի այն պայմանները, որոնց դեպքում պահանջվում է վերանայել պարտավորությունները: Աուդիտորը կարող է չհամաձայնել պարտավորությունների փոփոխությունների կատարմանը, եթե դրա համար չկան բավարար հիմքեր: Անհրաժեշտության դեպքում նա իրավունք ունի լուծել աուդիտի պայմանագիրը՝ համաձայն երկրի օրենսդրության պահանջների: Եթե տվյալ երկրի օրենսդրության աուդիտի իրականացման կամ աուդիտորական եզրակացության ձեւի վերաբերյալ պահանջները էապես տարբերվում են աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներից, այդ դեպքում աուդիտորը պետք է գնահատի այն հավանականությունը, որի պարագայում կազմված եզրակացությունը եւ անհրաժեշտությունն ղեկավարության քաղաքականության առկայությունները անհասկանալի կլինեն օգտագործողներին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայկ
ՄԱՅԱԿԱՆՅԱՆ
ԵՊՀ ֆինանսահաշվային
ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու,
րոգենտ

ԱՄՍ 220՝ Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի որակի վերահսկողություն ստանդարտը ներկայացնում է որակի վրահսկողության համակարգը, վերլուծում է աուդիտի մոտեցումները: Նշվածը բավական խոր վերլուծության է ենթարկվում նաև առանձին այլ ստանդարտներում: Աուդիտի որակի վերահսկողության ստանդարտը ուղեցույց է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացնող անձանց աշխատանքների որակի վերահսկողության վերաբերյալ պարտավորությունները սահմանելիս: Սույն ստանդարտը հիմնվում է այն ենթադրության վրա, որ կազմակերպությունը աշխատում է՝ համաձայն Որակի վերահսկողության ստանդարտ 1-ի պահանջների: Ըստ այդ ստանդարտի՝ կազմակերպությունը պետք է ապահովի որակի վերահսկողության այնպիսի համակարգ, որն իր հերթին կապահովի արժանահավատության բարձր մակարդակ: Այն ենթադրում է մասնագիտական ստանդարտներին տիրապետող մասնագետների առկայությունը կազմակերպությունում, ինչպես նաև իրավիճակի համապատասխան հաշվետվությունների ներկայացում: Ստանդարտը սահմանում է նաև աուդիտի իրականացման խմբի ղեկավարի պատասխանատվությունը աուդիտի որակի համար: Դրանք ներառում են ինչպես վարքագծի, այնպես էլ անկախության պահպանման վերաբերյալ համապատասխան պահանջներ: Որակի վերահսկողության արդյունավետ համակարգը ներառում է նաև մոնիտորինգի գործընթաց, որը ներառում է որակի վերահսկողության համակարգի նկատմամբ հսկողության ընթացակարգեր և միջոցառումներ: Մասնավորապես նշվում է աուդիտորական խմբի անդամների, բաժնետիրոջ, աուդիտը վերանայողի պարտականությունները և համագործակցության շրջանակը աուդիտի իրականացնելիս: Հաշվի առնելով այն փաստը, որ հաջորդ ստանդարտում մասնամասն դիտարկվում է աուդիտի փաստաթղթավորման պահանջները, սույն ստանդարտում միայն ներկայացվում է աուդիտի իրականացման, անկախության պահպանման, եզրակացության վերաբերյալ փաստաթղթավորման կարելու-թուլումը:

ԱՄՍ 230՝ Աուդիտի փաստաթղթավորումը ներկայացնում է աուդիտի փաստաթղթավորման էությունը, նպատակները և սահմանում է մի շարք պահանջներ՝ փաստաթղթավորման ժամկետների, ձեռք բերված ապացույցների և աուդիտի վերջնական փաթեթի պատրաստման վերաբերյալ: Աուդիտորը պետք է փաստաթղթավորի այն նյութերն ու փաստերը, որոնք՝
✓ պարունակում են կարելու տեղեկատվություն և փաստեր՝ աուդիտի նպատակի իրականացման և աուդիտորական կարծիքը հիմնավորելու համար,
✓ տրանզպորտում են ապացույցներ, որ աուդիտը պլանավորվել ու իրականացվել է աուդիտի միջազգային ստանդարտներին և օրենսդրության պահանջներին համապատասխան:

Աուդիտի փաստաթղթավորումը կարելուագույն բարձրորիչ է ինչպես բուն աուդիտի իրականացման, այնպես էլ վերահսկողություն և որակի բնույթի միջոցառումները կազմակերպելու համար: Ստանդարտը կարելուում է փաստաթղթավորման ժամկետների պահպանումը, քանի որ այն նապաստում է որակի բարձրացմանը, աջակցում վերանայման գործընթացներին, ավելի արդյունավետ է դարձնում աուդիտի իրականացումը: Փաստաթղթավորումը պետք է իրականացվի աուդիտի բուն գործընթացի ժամանակ: Աուդիտի իրականացումից հետո կատարված փաստաթղթավորումը համարվում է ոչ պատշաճ կատարված աշխատանքի արդյունք: Ըստ էության՝ ստանդարտը բավական մանրամասն ներկայացնում է, թե՛ աշխատանքի ընթացքում աուդիտորը ինչ ձեռք ու բովանդակությունների փաստաթղթեր պետք է հավաքագրի և պատրաստի: Փաստաթղթավորումը ներառում է ոչ միայն ֆինանսական բնույթի փաստաթղթեր, այլև աշխատանքային բնույթի այլ փաստաթղթեր, օրինակ՝ ղեկավարության հետ կայացած քննարկումների արձանագրությունները և այլն: Միաժամանակ փաստենք, որ հիմնականում հավաքագրվում են կարելու, այսինքն՝ էական նշանակության փաստաթղթերը: Փաստաթղթավորման համար անհրաժեշտ տեղեկատվության կարելու-թուլումը որոշվում է մասնագիտական դատողությունների արդյունքում: Էականության վերաբերյալ դատողությունները ենթադրում են փաստերի և իրավիճակի օբյեկտիվ վերլուծություն: Փաստաթղթավորումը տալիս է այն հիմնական ապա-

ցույցները, որոնք հիմք են պնդելու, որ իրականացված աուդիտը համապատասխանում է աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներին: Կարելուում ենք նաև անդրադառնալ աուդիտի վերջնական փաթեթի (գործի, ֆայլի) պատրաստման պահանջներին: Դրանք ավելի շատ ամփոփիչ, վարչական բնույթի պահանջներ են: Բայց դրանք կարելուում են որակի վերահսկման գործառնություններն իրականացնելու համար, ինչն էլ արտացոլվել է Աուդիտի որակի վերահսկման միջազգային ստանդարտում: Ըստ ստանդարտի պահանջի՝ կազմակերպությունը պարտադիր պետք է ունենա աուդիտի փաթեթը ժամանակին կազմելու համապատասխան ընթացակարգեր: Փաստաթղթերի պահպանման ժամկետը սահմանվում է ոչ պակաս, քան հինգ տարի՝ աուդիտի եզրակացությունը ներկայացնելու օրվանից: Հետագայում աուդիտի փաթեթի փաստաթղթերի վերանայումը և փոփոխումը պետք է լինեն խիստ հիմնավորված:

ԱՄՍ 240՝ Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության բացահայտման աուդիտորի պարտավորությունների վերաբերյալ ստանդարտը ամենածավալուն ստանդարտներից մեկն է: Ստանդարտը սահմանում է խարդախության բնութագրիչները, դրա կանխարգելման և բացահայտման համար աուդիտորի պատասխանատվությունները, այդ գործընթացում մասնագիտական դատողությունների իրականացման, ռիսկերի և աուդիտորական ապացույցների գնահատման, փոխհարաբերությունների հաստատման և փաստաթղթավորման վերաբերյալ պահանջները: Տարբերակվում են սխալ և խարդախություն հասկացությունները, և ներկայացվում է խարդախության երկու հիմնական տեսակ՝ ակտիվների համապատասխանության կեղծումն ու ֆինանսական հաշվետվությունների կեղծումը: Սխալ տեղումները վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում կատարված ոչ դիտարկող սխալներին՝ մաթեմատիկական, մեխանիկական վրիպմանը կամ փաստերի սխալ մեկնաբանմանը: Խարդախության կանխարգելման և բացահայտման հիմնական պատասխանատուներ են կազմակերպության ղեկավարները: Այդ իսկ առումով կարելու-վում են ներքին վերահսկողության և պատժամիջոցների կիրառման պատշաճ համակարգի ներդրումն ու արդյունավետ գործունեությունը: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտը կարող է լինել խարդախության կանխարգելման կամ բացահայտման լավագույն միջոց: Աուդիտորից պահանջվում է կիրառել ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան ձեռք բերել համապատասխան տեղեկատվություն՝ գնահատելու հնարավոր խարդախության ռիսկի մակարդակը, ինչպես նաև բացահայտելու հնարավոր կեղծիքը և խարդախության համար պատասխանատու անձանց շրջանակը: Աուդիտորի կողմից կիրառվող ընթացակարգերը նվազեցնում են, բայց չեն բացառում խարդախության և սխալների առաջացման հավանականությունը կամ ռիսկը: Խարդախության բացահայտումը պարունակում է ռիսկի բավական մեծ գործոն, որի նվազեցումը հնարավոր է ապահովել անհրաժեշտ տեղեկատվության բացահայտմամբ: Տեղեկատվությունն իր հերթին կարող է տրամադրել աուդիտորական այնպիսի ապացույցներ, որոնք կբացահայտեն ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն թողած խարդախության կամ սխալների դեպքերը: Խարդախության դեպքերի բացահայտումը ավելի ռիսկային է, քան սխալի արդյունքում անհամապատասխանության բացահայտումը: Դրա պատճառն այն է, որ խարդախությունը կարող է կրել կազմակերպված բնույթ՝ նպատակաուղղված խարդախության փաստերը թաքցնելու: Այդ առումով էական անհամապատասխանության բացահայտման ռիսկը ավելի մեծ է ղեկավարության խարդախության, քան աշխատակցի խարդախության դեպքում: Ցանկացած պարագայում աուդիտորը պատասխանատու է մասնագիտական կանխարգելման սկզբունքի կիրառման համար աուդիտի իրականացնելիս: Ստանդարտը սահմանում է խարդախության բնութագրիչները և աուդիտորի մասնագիտական անհրաժեշտ կանխարգելման շրջանակը: Ստանդարտը ներկայացնում է նաև խարդախության դեպքերի բացահայտման պարագայում աուդիտորի և ղեկավարության, աուդիտորի և պետական համապատասխան մարմինների հետ հարաբերությունների շրջանակը:

ԱՄՍ 250՝ Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների պահպանումը ներկայացնում է կազմակերպության կողմից օրենքների և իրավական ակտերի պահանջների պահպանման անհրաժեշտությունն ու կարելիությունը աուդիտորական ընթացակարգերի պլանավորման և իրականացման, ինչպես նաև դրանց արդյունքների գնահատման և տեղեկացման ժամանակ: Մասնագիտական օրենքները և իրավական ակտերը ունենում են ֆինանսական հաշվետվությունների վրա ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն: Անուղղակի ազդեցությունը կապված է բիզնեսի իրականացման տարբեր սահմանափակումների հետ, որի լավագույն օրինակներից է բանկային հատվածը: Ստանդարտը աուդիտորին օգնում է բացահայտել օրենքների և իրավական ակտերի հետ ֆինանսական հաշվետվությունների հնարավոր եական անհամապատասխանությունները: Այդ իսկ պատճառով, մինչև բուն աուդիտի իրականացումը, աուդիտորը պետք է ընդհանուր պատկերացում ունենա աուդիտի ենթակա ընկերության գործունեության ոլորտի օրենսդրաիրավական դաշտի վերաբերյալ: Ընդ որում՝ աուդիտորը պատասխանատու է ինչպես ֆինանսական հաշվետվությունների տարբեր ցուցանիշների վրա ազդող օրենքների իմացության համար, օրինակ՝ հարկերի, կենսաթոշակների մասին օրենսդրությունը, այնպես էլ անուղղակի ազդեցություն ունեցող օրենքների իմացության համար, օրինակ՝ լիցենզավորման, սնանկության վերաբերյալ օրենսդրությունը: Առաջին դեպքում աուդիտորի պարտականությունները ներառում են օրենքի պահանջների կատարման վերաբերյալ համապատասխան աուդիտի ապացույցների ձեռքբերումը, իսկ երկրորդի պարագայում պարտականություններն ավելի սահմանափակ են: Աուդիտորի գործունեությունը չի սահմանափակվում միայն օրենքների խախտման դեպքերի բացահայտմամբ և փաստաթղթավորմամբ: Այն ներառում է նաև այն պատճառների բացահայտումը, որոնք անհամապատասխանության հիմք են հանդիսացել: Անհամապատասխանության ցանկացած դեպք փաստաթղթավորվում է, ու եթե փաստերը վկայում են, որ ղեկավարությունը տեղյակ չի եղել անհամապատասխանության դեպքին, դրանք քննարկվում են կազմակերպության ղեկավարության հետ: Իսկ եթե պարզ է դառնում, որ կազմակերպության ղեկավարությունը տեղյակ է եղել անհամապատասխանությանը, այդ դեպքերը ներկայացվում են անկախ մարմնին՝ վերստուգող խումբ և այլն: Օրենքների և իրավական ակտերի պահանջներին անհամապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է աուդիտի եզրակացության մեջ:

ԱՄՍ 260՝ Կառավարման պատասխանատուների հետ փոխհարաբերություններ ստանդարտը վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 2009թ.: Այն կարգավորում է աուդիտորի և կազմակերպության կառավարման մարմինների հնարավոր հարաբերությունները և սահմանում է աուդիտորի պատասխանատվությունը կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում ղեկավարների հետ պատշաճ փոխհարաբերությունների ստեղծման համար: Պատշաճ փոխհարաբերությունների հիմունքը երկկողմանի գործընթաց է, որը նպաստում է աուդիտորի անկախության և օբյեկտիվության պահպանմանը, համապատասխան տեղեկատվության ձեռքբերմանը և նվազեցնում է ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման հնարավոր ռիսկերը: Զննարկումների առարկա կարող են լինել ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորի պատասխանատվությունները, աուդիտի պլանավորված շրջանակները և իրականացման ժամկետները, էական բացահայտումները: Փոխհարաբերությունների հիմունքը աուդիտի ապացույցների ձեռքբերման կարելիությունը գործին է, բայց կարծում ենք, որ այն կարող է նաև լինել տարբեր խնդիրների առաջացման հիմք: Մասնավորապես՝ կարգավորող մարմինը կարող է ներկայացնել սահմանափակումներ՝ աուդիտորի և ղեկավարի միջև փոխհարաբերությունների ստեղծման վերաբերյալ, եթե ղեկավարը հանդիսանում է այլ ոչ իրավական գործողությունների կասկածյալ անձ: Կարծում ենք, որ նշված դեպքում կարող են նաև առաջանալ խնդիրներ՝ աուդիտորի փոխհարաբերությունների ստեղծման պարտավորության և գաղտնիության պահպանման պահանջի միջև: Ստանդարտը սահմանում է փոխհարաբերությունների ստեղծման համար կազմակերպության համապատասխան պատասխանատուների շրջանակը, հարաբերության ստեղծման գործընթացը, ձեռքը, ժամկետները, փաստաթղթավորման պայմանները:

ժման համար կազմակերպության համապատասխան պատասխանատուների շրջանակը, հարաբերության ստեղծման գործընթացը, ձեռքը, ժամկետները, փաստաթղթավորման պայմանները:

ԱՄՍ 265՝ Ներքին վերահսկողության բացթողումների քննարկումը ղեկավարության հետ ստանդարտը բացահայտում է փոխհարաբերությունների ստեղծման առանձնահատուկ դեպքեր: Դրա նպատակն է աուդիտի ընթացքում բացահայտված և աուդիտորի մասնագիտական դատողության արդյունքում կարելիության արժանացած ներքին վերահսկողության բացթողումների քննարկումը: Ներքին վերահսկողության բացթողումներն առկա են, եթե ներքին վերահսկողության համակարգի գործունեության արդյունքում ժամանակին չեն բացահայտվում և կանխարգելվում ֆինանսական հաշվետվությունների սխալները, կամ էլ այն դեպքում, երբ ընդհանրապես այդ համակարգը բացակայում է: Բացթողումների բացահայտման դեպքում այն պետք է քննարկվի կազմակերպության ղեկավարության հետ: Ստանդարտն ըստ էության փաստում է այն պնդումը, որ ժամանակակից աուդիտը ենթադրում է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների ստուգում, այլև կազմակերպության գործունեության ավելի մանրամասն դիտարկում՝ ընդհուպ ներքին վերահսկողության խնդիրների բացահայտումը: Ուշադրության է արժանի փոքր կազմակերպությունների աուդիտի դեպքում այս ստանդարտի կիրառումը, քանի որ ի տարբերություն խոշորների՝ փոքր կազմակերպություններում, կարծում ենք, ներքին վերահսկողությունն ավելի արդյունավետ է, քանի որ այն հիմնականում իրագործում է հենց սեփականատերը, ով սովորաբար նաև կազմակերպության ղեկավարն է: Ըստ ստանդարտի պահանջի՝ ղեկավարության վերահսկողության գործառնությունները չպետք է գերազանհատվեն, որի արդյունքում կարող են տուժել բիզնեսի իրականացման ամենօրյա գործառնությունները:

1. Handbook of international standards on auditing, assurance and ethics pronouncements, International federation of accountants, New York, 2010 edition, p. 78.
2. International Standard on Quality Control 1, www.ifac.org

Օգտագործված գրականություն

1. International Standard on Quality Control 1, www.ifac.org
2. Handbook of international standards on auditing, assurance and ethics pronouncements, International federation of accountants, New York, 2010 edition, pp. 78-249.